հայկական բանակը ոչ մի դիմադրութիւն ցոյց չտուեց։ Այս կարծիքը արդիւնք է բացարձակ տգիտութեան։ Ընդհակառակը, եթէ հայ բանակի մի մասը չդտնուեց իր կոչման բարձրութեան վրա, միւս մասը ցոյց տուեց անձնադոհութեան, անվեհերութեան և հայրենասիրութեան սքանչելի օրինակներ։ Հայ–Թիւրքական վերջին պատերազմի պատմութիւնը, որը դեռ իր պատմաբանին է սպասում, կը բանայ մեր առջևը շատ ուսանելի էջեր, որոնք թուլութեան և անկազմակերպութեան կողքին ցոյց կը տան պետական գիտակցութեան և ռազմական կարողութեան շքեղ օրինակներ։ Մանաւորապէս բուռն կռիւներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատում. իրենց յարձակումը Թիւրքերը սկսեցին երկու ուղղութեամբ։ Քեազիմ Կարաբեքիրի ուժերի մի մասը շարժուեց Կարսի ճակատում. միւս մասը՝ մի դիւիդիա հետևակ, մօտ 2,000 քիւրդ խուժան, 8 թնդանօթ, ձիաւոր մասեր, ուղղուեցին դէպի Սուրմալու, ըստ երևոյթին կամենալով արագ հարուածով գրաւել մինչև Արաքս և հարուածի տակ առնել Երևանը։ Իգդիրի ճակատի ընդհանուր հրամանատար նշանակուեց Դրօն, որի ձեռքի տակ կային 9րդ գունդը — 1,200 հետևակ, 25 ձիաւոր, 16 գնդացիր, հրամանատար՝ գնդապետ Խուդաբաշեան. 8րդ գունդը — 600 հետևակ, 40 ձիաւոր, 8 գնդացիր, հրամանատար՝ Տ. Բաղդասարեան. էքսպեդիցիոն զօրամասը — 5 վաշտ — 500 հետևակ, 16 բեռնակիր և 8 ձեռքի գնդացիր. Կուռо Թարխանեանի այրուձին 260 ձիաւոր, 6 գնդացիր։ Հոկտեմբեր 1–ին 8րդ գունդը փոխադրուեց Կարսի ճակատ, որ Սեպուհի բրիգադի մի մասն էր. դրա փոխարէն նոր լրացումներ եղան, որով ամբողջ Սուրմալուի զօրամասի թիւը հասաւ մինչև 2,000 հոգի։ Զօրամասը շատ լաւ կազմակերպուած ու պարենաւորուած էր. բոլոր մասերը կապուած էին իրար և կենտրոնի հետ հեռախօսով. սերտ յարաբերութիւն էր ստեղծուած և զօրամասի ու ազգաբնակութեան, ինչպէս և էջմիածնի գաւառային ինքնավարութեան միջև։ Այս վերջինս էր վարում Սուրմալուի զօրամասի պարենաւորման գործը. ինչպէս նաև շատ յաջողութեամբ կատարեց Սուրմալուի ազգաբնակութեան տեղափոխութիւնը։

Հոկտեմբեր 20–ից սկսած, Թիւրքերը գործօն շարժումներ կատարեցին Սուրմալուի ճակատում։ Նրանք յարձակուեցին Կարաբուլաղ և Սոգիութլի գիւղերի վրա։ Հոկտ. 20–ի ամբողջ օրը տեղի ունեցան տաք կռիւներ. թնդանօթները երկու կողմից որոտում էին անընդհատ։ Թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ մերոնք նահանջեցին մինչև Արաքս. յաջորդ օրը դիմեցին հակայարձակման և յետ շպրտեցին թշնամուն ծանր կորուստներ պատճառելով նրան։ Մեր զոհերն էին սպանուած և վիրաւոր՝ երկու սպայ և 60 զինուոր։ Հոկտ. 24–ից կատաղի կռիւներ սկսեցին Քիւլլուկ, Կարակալա, Վերին Զարուխչի, Դաշբուռունի շրջանում։ Վաղ լուսաբացին, մօտ մէկ դիւիդիա կանոնաւոր ուժեր ու բազմաթիւ քրդական խմբեր յարձակման անցան Քիւլլուկ—Վերին Զարուխչի, Սուլթանաբաղ—Իգդիր, Դաշբուռուն—Կարակոյունլու—Մարգարա ուղղութեամբ։ Արիւնահեղ կռիւներ տեղի ունեցան։ Թշնամին բազմաթիւ անգամներ դիմեց գրոհի և միշտ յետ շպրտուեց։ Թիւրքերը առանց կանգ առնելու զոհերի առաջ, ձգտում էին, ինչ գնով էլ